ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2007 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 3568-1 ԱՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 20 նոյեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի սեպտեմբերի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 3568-1 ԱՄ ֆինանսավորման համաձայնագրում (Ռոգման համակարգերի զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի

Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև «Ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» N 3568-1 AM ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրվել է 2007թ. սեպտեմբերի 19-ին, Երևանում՝ ոռոգման համակարգերի զարգացման սկզբնական ծրագրին առնչվող միջոցառումների համար լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

2. Համաձայնագիրը սահմանում է այն Ծրագիրը, որի իրականացմանն ուղղվում է վարկավորումը, վարկավորման չափը, վճարման կարգն ու ժամանակացույցը, աշխատանքների իրականացման մեխանիզմներն ու ժամանակացույցը, վերահսկողության իրականացման կարգը, ֆինանսավորման ընթացակարգը, ինչպես նաև համաձայնագրի գործողության և գործողության դադարման կարգն ու ժամկետները: Համաձայնագրի մասն են կազմում նաև երեք ժամանակացույցեր և մեկ հավելված:

3. Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավմանը: Ծրագիրը բաղկացած է երկու մասերից՝ սկզբնական և լրացուցիչ:

4. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- իրականացնել ամբողջ Ծրագիրը գործող ԾԻԳ-ի (Ծրագրի իրականացման գրասենյակ) միջոցով,

- ապահովել Ծրագրի իրականացումը Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան,

- ապահովել Շրջակա միջավայրի կառավարման ծրագրի համար անհրաժեշտ բոլոր միջոցառումների ժամանակին իրականացումը,

- իրականացնել Ծրագրի աշխատանքների մոնիտորինգ և գնահատում, վարել կամ հանձնարարել վարել կառավարման համակարգ,

- սահմանված ժամանակացույցին խստիվ համապատասխան Ընկերակցությանը ներկայացնել միջանկյալ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները,

- հանձնարարել ՋՕԸ-ներին (ջրօգտագործողների ընկերություն) իրենց ֆինանսական հաշվետվությունները կազմել այնպես, որ դրանք արտահայտեն իրենց կատարած աշխատանքներն ու ֆինանսական վիճակը, ստուգել այդ հաշվետվությունները,

- համաձայնագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան Ընկերակցությանը վճարել ինչպես ֆինանսավորման չմասհանված գումարի դիմաց պարտավճար, այնպես էլ վարկի մասհանված հաշվեկշռի դիմաց սպասարկման վճար, վերադարձնել վարկի մայր գումարը:

5. Համաձայնագիրը նախատեսում է նաև աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգը, մեթոդները, ֆինանսավորման միջոցների մասհանման կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2007 թվականի սեպտեմբերի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 3568-1 ԱՄ ֆինանսավորման համաձայնագրում (Ոռոգման համակարգերի զարգացման

ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 նոյեմբերի 2007 թվականի
ՍԴՈ-718